ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«15» ապրիլի 2021թ. № 190

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի ԹԻՎ 177 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 1-ի թիվ 177 որոշման վերնագրում Ամալյա Հակոբի Գևորգյանի ազգանունը սխալմամբ գրվել է «Հակոբյանին»՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 1-ի «Ամալյա Հակոբյանին կառուցապատման իրավունքով հողամաս տրամադրելու մասին» թիվ 177 որոշման վերնագրում նշված «ՀԱԿՈԲՅԱՆԻՆ» բառը փոխարինել «ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ» բառով.
2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«19» ապրիլի 2021թ. № 191

## ԺԱՆՆԱ ԴԻԼԲԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՄՎԵԼԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2701808 վկայականը և Սամվելա Սարգսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ժաննա Դիլբարյանին և Սամվելա Սարգսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Ուզբեկական Կ-5 թաղամասում գտնվող 06-006-173-001-009 կադաստրային ծածկագրով 55,0 քառակուսի մետր մակերեսով բնակարանի «քաղաք Սպիտակ, Կենտրոնական թաղամաս, 3 շենք, թիվ 5 բնակարան» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Ուզբեկական Կ-5 թաղամաս, 3 շենք, թիվ 5 բնակարան» հասցեով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«19» ապրիլի 2021թ. № 192

## ՀԱՅԿ ԿԱՌԼԵՆԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կառլեն Թումանյանի մահից հետո Սպիտակ համայնքի Քըրք-Քըրքորյան փողոցի վրա գտնվող անշարժ գույքը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2019 թվականի հունվարի 15-ի վկայագրի փոխանցվել է Հայկ Կառլենի Թումանյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով Հայկ Կառլենի Թումանյանին դիմումը՝ *որոշում եմ.*

1. Հայկ Կառլենի Թումանյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Քըրք-Քըրքորյան փողոցի վրա գտնվող 0,263 հա մակերեսով տնամերձ հողամասին, դրա վրա գտնվող 222,5 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը, 82,8 քառակուսի մետր մակերեսով անասնագոմին և 49,6 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակին տրամադրել «քաղաք Սպիտակ, Քըրք-Քըրքորյան փողոց, թիվ 87» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«19» ապրիլի 2021թ. № 193

## ՍՄԲԱՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1131340 վկայականը և Սմբատ Գևորգյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սմբատ Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 0,07 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Տեր-Սիմոնյան փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 19» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«19» ապրիլի 2021թ. № 194

# ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 26 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի փետրվարի 22-ի թիվ 26 որոշմանը կից ցուցակում Աղվան Գարեգինի Պողոսյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Գարուշի», հիմք ընդունելով Աղվան Գարեգինի Պողոսյանի անձնագիրը և Աղվան Գարեգինի Պողոսյանի ներկայացուցիչ Գնել Պետրոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի փետրվարի 22-ի «Սպիտակ քաղաքի Խնկոյան, Թորոսյան և Շահումյան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 26 որոշմանը կից ցուցակի 32-րդ տողում նշված «Գարուշի» բառը փոխարինել «Գարեգինի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 19
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» ապրիլի 2021 թվականի N 195

# «ՍՊԻՏԱԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի՝ «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» թիվ 02-Ն հրամանի՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի մայիսի 20-ին, ժամը 14:30-ին անցկացնել բաց մրցույթ «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

2.Մրցույթի անցկացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հրապարակել հայտարարություն:

3. Մրցույթն անցկացնել Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքում:

4. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին՝ սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մասին պատշաճ տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի և տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմերին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 19
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«19» ապրիլի 2021թ. № 196

## ԱՂՎԱՆ ՖՐԱՆԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1955168 վկայականը և Աղվան Վարազդատի Ֆրանգյանի դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Աղվան Վարազդատի Ֆրանգյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Քըրք-Քըրքորյան փողոցի վրա գտնվող 06006 308-36 կադաստրային ծածկագրով 0,0806 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Քըրք-Քըրքորյան փողոց, թիվ 266» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 19
ք.Սպիտակ